ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

19 դեկտեմբերի 2017 թվականի **թիվ 181** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների վարչական եւ քրեական օրենսդրության՝ այն վարչական իրավախախտումների ու հանցագործությունների կամ քրեական իրավախախտումների համար վարչական եւ քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածների ընդհանուր ցանկի մասին, որոնք կատարելու համար պատասխանատվության ենթարկելը անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված է որպես լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելը մերժելու հիմք

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 433-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Հաստատել կից ներկայացվող՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների վարչական եւ քրեական օրենսդրության՝ այն վարչական իրավախախտումների ու հանցագործությունների կամ քրեական իրավախախտումների համար վարչական եւ քրեական պատասխանատվություն

նախատեսող հոդվածների ընդհանուր ցանկի ձեւավորման եւ վարման կարգը, որոնք կատարելու համար պատասխանատվության ենթարկելը անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված է որպես լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելը մերժելու հիմք:

2. Սահմանել, որ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների վարչական եւ քրեական օրենսդրության՝ այն վարչական իրավախախտումների ու հանցագործությունների կամ քրեական իրավախախտումների համար վարչական եւ քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածների ընդհանուր ցանկի տեղեկատվությունը, որոնք կատարելու համար պատասխանատվության ենթարկելը անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված է որպես լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելը մերժելու հիմք, օգտագործվում է նշված ռեեստրում ընդգրկելու պայմանների՝ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձի կողմից պահպանումը ստուգելիս:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո, սակայն 2017 թվականի ապրիլի 11-ի՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ շուտ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
դեկտեմբերի 19-ի թիվ 181 որոշմամբ

ԿԱՐԳ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների վարչական եւ քրեական օրենսդրության՝ այն վարչական իրավախախտումների ու հանցագործությունների կամ քրեական իրավախախտումների համար վարչական եւ քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածների ընդհանուր ցանկի ձեւավորման եւ վարման, որոնք կատարելու համար պատասխանատվության ենթարկելը անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված է որպես լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելը մերժելու հիմք

1. Սույն կարգը մշակվել է Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) մաքսային օրենսգրքի 433-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան եւ սահմանում է Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) վարչական եւ քրեական օրենսդրության՝ այն վարչական իրավախախտումների ու հանցագործությունների կամ քրեական իրավախախտումների համար վարչական եւ քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածների ընդհանուր ցանկի (այսուհետ՝ ցանկ) ձեւավորման եւ վարման կանոնները, որոնք կատարելու համար պատասխանատվության ենթարկելը անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված է որպես լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելը մերժելու հիմք:

2. Ցանկի ձեւավորումն ու վարումը ներառում են անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից Եվրասիական տնտեսական հանձնաժողով

(այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացվող՝ անդամ պետությունների վարչական եւ քրեական օրենսդրության՝ վարչական իրավախախտումների ու հանցագործությունների կամ քրեական իրավախախտումների համար վարչական եւ քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածների մասին տեղեկատվության (այսուհետ՝ տեղեկատվություն) ստացումը, պահպանումը, համակարգումն ու արդիականացումը եւ իրականացվում է Հանձնաժողովի կողմից:

3. Ցանկը կազմվում է հավելվածի ձեւի համաձայն եւ տեղադրվում է Միության պաշտոնական կայքում:

4. Տեղեկատվությունն անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից Հանձնաժողով է ուղարկվում *.xlsx ձեւաչափով՝ Հանձնաժողովի cis@eecommission.org էլեկտրոնային փոստի հասցեով՝ անդամ պետությունների համապատասխան ակտերում կատարված փոփոխությունները պաշտոնապես հրապարակելու օրվանից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օր հետո, եթե այդ փոփոխություններն առնչվում են ցանկում ներառված տեղեկատվությանը:

5. Ստացված տեղեկատվության հիման վրա Հանձնաժողովն ապահովում է Միության պաշտոնական կայքում ցանկի թարմացումը՝ այդ տեղեկատվությունը ստանալու օրվանից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օր հետո:

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների վարչական եւ քրեական օրենսդրության՝ այն վարչական իրավախախտումների ու հանցագործությունների կամ քրեական իրավախախտումների համար վարչական եւ քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածների ընդհանուր ցանկի ձեւավորման եւ վարման կարգի, որոնք կատարելու համար պատասխանատվության ենթարկելը անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված է որպես լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելը մերժելու հիմք

(ձեւ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՆԿ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների վարչական եւ քրեական օրենսդրության՝ այն վարչական իրավախախտումների ու հանցագործությունների կամ քրեական իրավախախտումների համար վարչական եւ քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածների, որոնք կատարելու համար պատասխանատվության ենթարկելը անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված է որպես լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելը մերժելու հիմք

Եվրասիական տնտեսական միության անդամ պետության անվանումը	Եվրասիական տնտեսական միության անդամ պետության օրենսդրության նորմատիվ իրավական ակտը			
	անվանումը, ընդունման ամսաթիվը եւ համարը (առկայության դեպքում) (փոփոխություններ կատարելու վերջին ամսաթվի դրությամբ փոփոխություններով)	վարչական իրավախախտում եւ հանցագործություն կամ քրեական իրավախախտում, որը կատարելու համար պատասխանատվության ենթարկելը Եվրասիական տնտեսական միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված է որպես լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելը մերժելու հիմք		
		հոդվածի համարն ու անվանումը (առկայության դեպքում)	հոդվածի կազմությունը եւ դրանով նախատեսվող պատժամիջոցները	սուբյեկտը (ֆիզիկական եւ (կամ) իրավաբանական անձ)
1	2	3	4	5